

ԹԱՐՏԱԴԻԲ ՎՈՐՈՅՈՒՄ

ԱԳՐՈԶԵԽՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԿԵՐԱՊՈՄՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ, ՀԱՍՏԱ-
ՎԱԾ ԳԵՐԱԿՈՒՅՆ ԽՈՐՃՐԴԻ ՆԱԽԱԴԱԼԻՔՅԱՆ ԿԻՑ ՂՈՒ-
ԿԱՅԱՆԻ ԿԱԶՄԿՈՄՄԵՅՅԻ 1939 թվի ՄԱՐՏԻ 9-Ի № 5
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹ. № ± ԿԵՏ

ՊԵՐՏԱԴԻԹ ՎՈՐՈՇՈՒՄ

ԱԳՐՈՁԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՇՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ԿԻՑ ՂՈՒԿԱՍՅԱՆԻ
ԿԱԶՄԿՈՄԻՏԵՅԻ 1939 թվի ՄԱՐՏԻ 9-Ի № 5 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹ.

№ 4 ԿԵՏ

«Մենք պետք եւ այժմ արդեն պատրաստվենք այն բանին,
վորպեսզի մուակա ապագայում մի յերեք չորս տարուց հետո
հացահատիկի տարեկան արտադրությունը հացնենք 7—8 միլ-
լարդ գիթ» Ի. ՍՏԱԼԻՆ:

(1935 թ. ղեկուեմբեռի 1-ին կոմբայնավարների
խորհրդակցության արտասանած ձառից):

Բարձրացնել կոլտնտեսային դաշտերի բերքատվությունը,
մտցնելով և պահպանելով կանոնավոր ցանքաշրջանառություն,
խոր հերկ, փոչնացնելով մոլախոտերը, ընդարձակելով ու լավ
մշակելով ցելերն ու աշնանավաղը, ժամանակին և խնամքով կա-
տարելով տեխնիկական բույսերի շարամեջ մշակումը, ժամանակին
բուկ տալով շարքահերկերը, պարարտացնելով հողը, թե անաս-
նականական ապրանքային ֆերմաների և թե կոլտնտեսականի
անտեսության գոմաղբով, հանքային պարարտաներութերով, պայ-
քար մղելով գյուղատնտեսական վնասատուների գեմ, ժամանա-
կին ու խնամքով հավաքելով բերքն առանց կորուստի, պահպա-
նելով ու մաքրելով գոռոգիչ կառուցումները, պահպանելով ան-
տառները, տնկելով դաշտերը պահպանող անտառաշերտերը:
Աստիվ պահպանելով տեղական հողային որգանների կողմից սահ-
մանված ագրոտեխնիկական կանոնները: Գյուղատնտեսական ար-
տելի կանոնադրության 4-րդ գլխի 6-րդ կետի «Ա» յենթակետը:

Հացահատիկային կուլտուրաների բարձր բերքատվությունը
ապահովելու, ժողովրդների սիրելի առաջնորդ՝ Մեծ և խմաստուն
պէկալվար, հայր ՍՏԱԼԻՆի ցուցմունքը՝ մոտակա 3—4 տարում
հացահատիկի արտադրանքն ԽՍՀՄ-ում տարեկան 7—8 միլլարդ

փիթի հասցնելու լոգունգը կենսագործելու նպատակով իբրևի մենքիմալ կանոններ, շրջանի գյուղատնտեսական հիմնական աշխատանքների համար սահմանել հետեւյալ ագրոկանոնները:

Յելելով Հռոկայանի շրջանի պետական առաջադրանքից և հաշվի առնելով առանձին կորոնտեսությունների բնապատմական պայմանները, մոտավոր միամիման ագրոձեռնարկումներ կիրառելու տեսանկյունով շրջանը բաժանել հետեւյալ դրաների:

1-ին Զ Ա Ն Ա.

- | | |
|------------|---------------|
| 1) Թաքնարի | 7) Բաշ գյուղ |
| 2) Ճղողար | 8) Փ. Սարիսար |
| 3) Թողոս | 9) Գետիկ |
| 4) Իլի | 10) Սամալի |
| 5) Փալութի | 11) Չորաշին |
| 6) Քեֆի | 12) Չորլի |

2-րդ Զ Ա Ն Ա.

- | | |
|----------------|-------------------|
| 1) Վարդաղբյուր | 9) Ղուկասյան |
| 2) Բողոքիուչ | 10) 1-ին Շիշթառիա |
| 3) Սալուտ | 11) 2-րդ Շիշթառիա |
| 4) Զիթառի | 12) Ղազանջի |
| 5) Կարմրավան | 13) Քոռաղբյուր |
| 6) Դուլվարաբա | 14) Դարաքոյ |
| 7) Ղուրղբուլող | 15) Բավրա |
| 8) Արփա | 16) Թազաքյանդ |

1. ԱԵՐՄԱՑՈՒՅԹԻ ԱՌԱԽՉԱՑՈՒՅԹԸ ՅԵՎ ՊԱՀՊԱՆՈՒՅԹԸ

«Յանքսի համար ընդունել լավագույն սերմեր, մաքրել դրանց ամեն տեսակի աղբից, պահպանել հափշտակումից ու փչացումից, պահել մաքուր, ողափոխուղ շնչերում, ընդարձակել տեսակավոր սերմերի ցանքը»: Որինակելի կանոնադրության 4-րդ դիմի հետո:

1. Կորոնտեսությունների ամբողջ ցանքսի սերմացուն պարտապիր կարգով յենթարկել լարութատոր ստուգման, առնվազն յերկու անգամ, ըստ վորում 1-ին ստուգումն ալվարտել վոչ ուշ քան հոկտեմբերի 15-ը, իսկ 2-րդը գարնանացանքսից 20 որ առաջ: Աշնանցանքսի վերջին լարութատոր ստուգումը ալվարտել վոչ ուշ քան ցանքսից 5 որ առաջ:

2. Խստիվ արգելել, ցանքը այն սերմացուները, վորոնք սերմ ստուգող լարութատորից կողմից ալվարտել սերմացուների լարությունը հասաւող համապատասխան փաստաթուղթ՝ չունեն:

3. Յանքսը կատարել, դեկավարվելով 3 հունվարի 1938 թ. N. 1 ԱՍՏ-ով, միաժամանակ պայքարաբերով 100 տոկոսի մաքրության համար: Մերժացուն գտել այնքան անդամ, մինչև, վոր համապատասխանի մաքրության կոնդիցիային:

4. Լարութատոր ստուգման համար սերմացույի նմուշները վերցնել ազգունումի սերմ ստուգող լարութատորիայի մասնագետի, կամ նրա կողմից գրավոր լիազորված անձի միջոցով:

5. Ամբողջ հացահատիկի սերմացուն յենթարկել ախտահանման, ըստ վորում սերմագատերինը կատարել բացառապես թաց, կամ կիսաչոր մեթոդով, (նայած հացահատիկի տեսակին), իսկ մաւացած ցանքսիրինը, ըստ հետրավորին, նույնակես առաջին հերթին թաց, կամ կիսաչոր յեղանակով: Դեղանյութերի յեկ տեխնիկական միջոցների բացակայության, կամ կլիմայական անհապատ պայմանների գեպգում (չոր հողերում) Հողբաժնի ՄՏԾԿ-ի համարկ թուլավությամբ ու ցուցմունքով, ախտահանումը կատարել չոր յեղանակով:

2. ԳԱՆՑԵՐԻ ՊԱՐԱՐՏԱՑՄԱՆ ԱՍՊԱՐԻՉԱԽԱՄ

6. Սահմանել, վոր պարարտացման նպատակով ստանձնացվող գոմալիքը պես և պահել հատուկ կառուցված աղբամբարներում, իսկ մեզը մեզամբարներում, մոխիբը, թուչնաղը, խառնազը և գիշերային գոսկին կույտերով պահպանել հատուկ աղբամոցներում ծածկի տակ, իսկ գարնանը գոմերում յեղած անտուների աղբը լցնել փոսերի մեջ վրան ավելացնելով խառն աղը, ծածկել հողի շերտով, և հասունացումից հետո դաշտ տեղափոխել: Այլ աշնանը և ձմռան ընթացքում դաշտ փոխադրվող պարարտանյութերը հողի յերեսին ցրելն արգելել, թույլ տալ դասավորելու դաշտերում մեծ կույտերով միայն, (հեկտարին արքական գոմերում 3—4 կույտերից վոչ ավելի), վորը պնդացնել և մերկեցից տանիքածի ծածկել հարաշերտով:

7. Վոռոգման ցանցեց հանված տիզմը պահել հատուկ կույտերով և զարնամեր դաշտերն բացվերուն պես, հավասար շաղ տալ հողի յերեսին և անմիջապես խոր վարել: Այլ աշնանը ձմռան և զարնան ընթացքում դաշտ փոխադրված ու կիտված պարարտանյութերը, հավասար շերտով շաղ տալ հողի յերեսին և վարել:

8. Յրատէրկի տակ գնացող հողերը պարարտացմել նախքան նյութերով պարարտացնելիս պարարտանյութը մտցնել ցրտահերկի գարնան կրկնավարից առաջ: Պարարտանյութերի նորման մեկ հեկտարին:



1-ին ԶՈՆԱՅԻ ԳՅԱԽՎԵՐՈՒՄ

Գոմաղը 35—45 տոն. խառն աղը 20—30 տոն.
Գոմաղը 70 սայլ, խառնաղը 40 սայլ:

2-րդ ԶՈՆԱՅԻ ԳՅԱԽՎԵՐՈՒՄ.

1. Գոմաղը 30—35 տոն, 2. խառն աղը 15—20 տոն
3. Գոմաղը 60 սայլ, 4. խառնաղը 30 սայլ:

3. ՑՈՆՔԻ ՀԱՄԱՐ ՎԱՐԵԼԱՀՈՂԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԸՆԴՀԱՆՈՒԹՅԵՒՆ

9. Վարից առաջ չակիները (քարերը) գաշտից դռւրս հանել,
թմբերը հարթել և միջնակները վերացնել:

10. Իբրեւ կանոն, վարը կատարել հողի քեշին հասունացման
ժամանակ միայն: Գութանի վարից հետեւից ակոս առ ակոս հա-
վաքել չայիրի արմատները և այլքել (այրել նաև մյուս վնասակար
բույսերի կոճկ արմատները) գործը զնելիս անպայման յենել նա-
խորդ վարի ուղղությունից՝ առը ներսի գեղքում, անպայմանո-
րին, գործը զնել առը գուրս և ընդհակառակը:

11. Վարը կատարել մաքուր, առանց խումի և խարակի ու
նախորդ վարի ուղղահայաց ուղղությամբ: Բազմախոփան գու-
թաններով վարելիս, բոլոր խոփեղը պահպանել հավասար խորու-
թյան վրա: Բոլոր վարերի նկատմամբ անխսիր կատարել մաքուր
գլխավար: Հողամասերի յեղերին չվարած տարածություններ
չթողնել: Վարի ընթացքում պարտադիր կերպով ոգտադործել
գութանի ձեղիները, դիսկերը և նախադութանիկները: Վարի
վորակի ամրող պատասխանաւովությունը դնել անձնապես բրի-
գադիրի և կոլտնտեսության նախագահի վրա:

4. ՎԱՐԵԼԱՀՈՂԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԱՃՆԱՆԱՑԱՆԻ ՀԱՄԱՐ

12. Աշնանացանն իբրեւ կանոն, կատարել ցելերի վրա: (Բա-
ցառություն թույլ տալ միայն հողբաժնի և ՄՏԿ-ի հատուկ կար-
գագրությամբ) ըստ վորում:

13. 1940 թվի աշնանացանի համար նախատեսված մաքուր
ցելային հողամասերը, վաղ ցել անել գարնանացանին զուգահեռ
այն հաշվով, վոր ազատ մնացած բոլոր հողամասերը վարվեն
վոչ ուշ քառն ավագ սառնայի հասկավոր հացահատիկների ցանք-

սի ավարտման ժամկետին: Վաղ ցելի ավարտման ժամկետ սահ-
մանել մինչև մեկը մայիսի, թե մեկի և թե մյուսի գեղքում վարի
խորությունը սահմանել վոչ պակաս քան 20—22 սմ., այն հողե-
րում վորոնց վարելաշերտը ավելի նվազ և, վարի խորությունը
սահմանել վարելաշերտի ամբողջ խորության վրա:

14. Սեղ ցելերի մշակությունը կատարել հետեւյալ կերպ:
ամենավաղ գարնանը կատարել ցելերի փոցիում ջրի գոլորշացու-
մը կամիելու համար:

15. Թէ սկ և թե վաղ ցելերը կանաչելուց յերբ մոլախոտերը
դրեթե դադարումեն ծլելուց, կատարել բազմախոփ գութան-
ներով 12—15 ս. մ. խորությամբ և անհրաժեշտության դեպքուն
անմիջապես փոցիուել: Ցելի կրկնակի կանաչելուց հետո պարա-
տացնել գոմաղբով, պարաբանյութը անմիջապես ցրել ու նույն
որը վարել, այն դեպքում, յերբ գոմաղբը մտցվում ե հողի մեջ
թարմ գարմանու (վոչ փթած) վարը կատարել վարելաշերտերի
լրիվ խորությամբ, իսկ յեթե փթած գոմաղը ե մտցվում, վարը
պետք ե կատարել 20 ս. մ. խորությամբ: Աշնանացանքսից ա-
ռաջ կատարել կուլտիվացիա և փոցիում, վորից հետո ցանել,
յանջերի ավազությունից հողերի, կամ մեծ վարելաշերտ չունեցող հողա-
մասերի վարի խորությունը հարմարացնել նրա կուլտուրական
շերտին (այդ խնդիրը յուրաքանչյուր անզամ համաձայնեցնել
տեղական ադրապերանալի հետ):

16. Զբաղված ցելերը լուչովկայի յենթարկել խոտհն-
ձին, կամ զբաղեցնող կուլտուրայի բերքահավաքին զաւդաշեռ,
վորից հետո աշնանացանից 15—20 որ առաջ խորը վարել, միա-
ժամանակ կատարել փոցիում (վարի խորությունը կատարել
առնվազն 20—22 ս. մ.):

5. ՎԱՐԵԼԱՀՈՂԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԳԱՐՆԱՆԱՑԱՆԻ ՀԱՄԱՐ

17. Գարնանացանը իբրեւ կանոն կատարել՝

ա) Յըրտահերկի վրա,

Շարքահերկ բույսերից հետո:

գ) Բազմաժամ խոտերից ազատությամբ և աշնանը հերկված ան-
դերում:

դ) Լավագույն նախորդով ապահոված հողամասերի վրա:

18. Բոլոր դեպքերում ել, դաշտի հիմնական վարը, հացահա-
տիկային կուլտուրաների համար կատարել առնվազն 20—22 :

մ. խորությամբ, իսկ այն հողերում վորոնց վարելաշերտը մեծ
չէ, վարի խորությունը սահմանել վարելաշերտի ամբողջ խորու-
թյամբ, գարնանացանի համար նախորդ տարվա աշնանը նախա-
պատրաստված խոր և բարձր վորակի հողամասերը, վաղ
գարնանը թեթեւ կրկնավարել լուչովկայի հողամասերով և կուլտիվատոր-
ներով, անպայման կրկնավարել վորիցի համար հավաքել և ապա-
ցանել:

Համեմատարար ուշ ցանխող կուլտուրաների ցանքսի գեղագում, վաղ գարնանը ցրտահերկը նախապես փողիներ, խոնավությունը պահպանելու համար, ծանր նըստած հողամասերի ցրտահերկի կրկնավարը կատարել խոր: (Անհրաժեշտության դեպքում ազգունումի ցուցմունքով) հակառակ ուղղությամբ լավ փոցինել չեվ ապա կատարել ցանքը: Ցրտահերկի վրա գարնանը պարարտանյութ տալու գեղագում քեշին կրկնավարել այն հաջողվ, վոր պարարտանյութը լավ ծածկվի հողում: Կրկնավար կատարած հողամասերն անմիշապես փոցինել:

6. ՅԻՍԱՀԵՐԿԻ Ա.ՍՊԱՐԵԶՈՒՄ

19. Ամռանը բերքահավաքին գուղընթաց, կատարել խողանի յերեսվար 5—7 մ: Խորությամբ, իսկ աշնանն այդ հողամասն սննդային խորը վարել 20—22 մ: Խորությամբ: Խողանի յերեսվարն կատարել առաջին հերթին մոլախոտերով ամիկի վարակված հողերում շարքահերկ բույսերից հետո դաշտն աղատիկի լուն պես կատարել ցրտահերկ, առնվազն՝ 20—22 մ: Խորությամբ:

20. Խոպան հողերում ցրտահերկի կատարելուց հետո մեծ կոչտեր առաջանալու դեպքում (կոճղարմատներով չվարակված դաշտերը) վարի հետ միաժամանակ ափսեյափոր փոցիներով մշակել կոշտերը ջարդելու համար: Անհրաժեշտության դեպքում, այդ տարածությունն աշնանը կրկնի անգամ խորը վարել:

Ցրտահերկի ամարտման ժամկետը սահմանել մինչեւ նոյեմբերի 10-ը:

7. ՍԵՐՄՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԽՆԴՐՈՒՄ

21. Տեսակալոր և տեղական բարձր բերքատու արժեքավոր սերմացուներով հացահատիկային կուլտուրաների ամբողջ տարածությունները ապահովելու համար ընթացիկ գարնանը բարը կոլտնտեսություններում ընտրել և սահմանացնել սերմարաշտերի համար ամենից բերրի, լավ մշակված, պարարտապված, մոլախոտերից մաքուր հողամասեր: Սերմագաշտերը պետք ե ունենան լավ նախորդ, աշնանացան հացահատիկների համար սև կամ վաղ ցեղ, գարնանացան հացահատիկների համար շարքահերկ կուլտուրաներ, միաժյա և բարձրացյա խոտարույսեր:

22. Ցանքաշընառություն կիրառվող կոլտնտեսություններում սերմագաշտն առանձնացնել ցանքաշընառության ամենաբարձ հողամասը: Սերմագաշտերին հատկացնել ցեղ, կամ լավ մըշակված ցրտահերկ, պարարտացված, մոլախոտերից մաքուր լավ մշակված հողամասեր:

23. Սերմագաշտերի տարածությունը սահմանել այն չափով,

վոր ապահովի տվյալ կուլտուրայի սորտի, ցանքսի ամբողջ տարածությունը սերմացույով և 10—15 տոկոսով սերմ ապֆոնդը:

24. Սերմագաշտերի պարարտացումը կատարել միմիայն մշակված և խնամքով պահպանված գոմագր նաոնազբով և հանքային պարարտանյութերով:

25. Սերմագաշտերը ցանել առաջին կարգի բարձր բերքատություն և զտասորություն ունեցող սերմացույով, այդ սերմացում պիտի և առանձնացնել սեղեկցիոն և տեղական դյուլացիական բարելաված մշակված բերքատուցանքով, ինչպես մասսայիկան ընտրության հետեւկանքով, այնպէս ել լավագույն ցանքսերի ընդհանուր բերքով:

26. Սերմագաշտերի ամբողջ ցանքսը կատարել շարքացանով: Սերմագաշտերի համար առանձնացված սերմացուն ախտահանել իսպահ և կիսաշոր մեթոդներով (նայով կուլտուրային):

27. Սերմագաշտերի համար սահմանել ցանքսի առանձին նորմաներ, յենելով սորտի հողամասի և ցանքսի ձեփերից, նկատունենալով, վոր չափ նոոր ցանքսը իջեցնում և բերքը մեկ հեկտարից, իսկ իրից ցանքը վատացնում և սուսցված սերմացույի ժորակը:

28. Սերմագաշտերի ցանքսը կատարել ագրոտեխնիկայի ձեռօր ժամկետներում, 2—3 որվա ընթացքում:

29. Զգուսդվող հողամասերի սերմագաշտերում ննացումը կատարել թիակամբան չըջմանում, կատարվող փոցիսից առաջ, իսկ վոռոգվող հողամասերում բացի փոցիսի տպած մնուցումը, առաջ նաև հասկակամբան չըջմանում ջրի հետ միասին առեն մի հողամասի համար առանձին վորոշված քանակի:

30. Սերմագաշտերը քաղաքան կատարել ըստ անհրաժեշտության (3—4) անգամ, այն հաշվով, վոր մինչեւ խողովակալարմը սերմագաշտերը լինեն մոլախոտերից միանգամայն մաքուր:

31. Սերմագաշտերում ազգունումի ցուցմունքով կատարել սորտային քաղաքան:

32. Սերմագաշտերի հունձը կատարել նրանց լրիվ հասունացան ժամանակի:

33. Ամբողջ տեսակալոր և տեղական գյուղացիական բարձրագած ցանքսերը յինթարկել ապրուցիայի (այդ թվում սերմագաշտերը):

34. Բարձր բերքատու ճանաչված ցանքսերն ապրարացիոն արձանագրություններով սորտային հատկությունները հաստատող գիտառաթիթերի համաձայն, ըստ կուլտուրաների տեսակների ու կատարելու բարձրացնելու համեմատ գաղաքանացի համեմատ գաղաքանացի համեմատին այն հաջողվ, վոր տարրեր սորտեր և կատեգորիաներ միմյանց հետ չխաւումն: Բարձր բերքատու ճանաչված

Քաշտերի ցանքսերի բերքը ցանել առանձին և ոգտավործել բայց առապես, վորակեա սերմացու:

35. Սերմաղաշտերի հունձը, փոխադրումը, կալսումն ու ըստացված բերքի պահպանումը կատարել Համաձայն ապրորացիոն ակտերի, միանդամայն առանձին-առանձին:

36. Սերմաղաշտերի տեսակալոր ցանքսերը ցանող-բերքահավաքող (կոմբայն) կալսող և զտող մեքենաներն ու գործիքները պետք են լինեն այլ կուլտուրաներից և սորտերից միանդամայն ժաքուր:

37. Բերքահավաքից մինչև ցանքսը սերմացույի պահպանման և ինամքի ամբողջ պատասխանատվությունը դնել անձնապես կոլ-վարչության նախագահի և պահեստապետի վրա:

8. ՅԱՐՈՎԻԶԱՑԻԱՑԻ ԱՍՊԱՐԵՁՈՒՄ

38. Գարնանացան ցորենի և գարու սերմացուն յարովիզացիայից առաջ զտել, ամբողջապես մաքրել մրիկի պարկերից և յենթարկել յարովիզացիայի, ինչպես բոլոր ձեռնարկումների նույնացիում և յարովիզացիայի պլանի կատարումը պարտադիր ե:

39. Յարովիզացիան կատարել լավ ողափոխվող, նախորոշ ախտահանված և պինդ հատակ ունեցող շենքերում, կամ նախեների տակ. Հացահատիկի պահեստներում յարովիզացիայի կատարումը արգելվում ե:

40. Յարովիզացիայի յենթակա սերմացուն ախտահանել ԱԲ. պրեզարատով, կամ ֆորմալինով, (Համաձայն Հողբաժնի և ՄՏԿ-ի հրահանդի):

9. ՑԱՆՔԻ ԽՆԴՐՈՒՄ

Ա. Ցանքի ձեվերը

41. Մեքենահարմար բռլոր հողամասերը ցանել բացառապես պարզացնով:

42. Խոզանի յերեսին (առանց վարելու) գութանի, կամ արուի բռղազացան կատարելը խստիվ արգելվում է:

43. Շաղացան կատարել միայն մեքենայացման միանդամայն անհարմար հողամասերում, այն ել Հողբաժնի, կամ ՄՏԿ-ի հատուկ թույլտվությամբ: Շաղացան կատարելիս սերմը ցանել նախապես խոր վարփած ու լավ փոցիված հողամասի վրա, ապա գործարանային, կամ տեղում պատրաստված կուլտիվատորներով ու փոցիներով ծածկել սերմերը:

44. Հողբաժնի և ՄՏԿ-ի կողմից կազմված հատուկ առաջու-

դրանքի կատարումը խաչաձև ցանքսը կատարելու վերաբերյալ նույնպես պարտադիր է:

45. Հացահատիկների ցանքսի խորությունը թե շարքացանի և թե շաղացանի դեպքում հարմարեցնել տեղի հողային և կլիմայական պայմաններին, իբրև միջին խորություն հացահատիկների համար սահմանել 4—7 սմ., աշնանացաններն ավազային հողամասերում ցանել համեմատաբար խոր, սակայն վոչ ավելի քան 8 սմ. խորությունից, իսկ մնացած դեպքերում, խնձագությամբ պատճով վարելահողերում 5—6 սմ. խորությամբ:

46. Շարքացանով ցանքսն սկսել հողի քեշին առանց սպառելու բրիգադային, կամ սառնայի հողերի լրիվ քեշի գալուն:

Բ. ՑԱՆՔԻ ԺԱՄԿԵՏՆ ՈՒ ԽՏՈՒԹՅՈՒՆԸ

47. Մասսայական ցանքս սկսել գաշտ գուրս գալու առաջին խոկ հարավոր մոմենտին, հողի քեշին և ավարտել ցորենի, գարու և գարսակի նկատմամբ 6—9 բանվորական օրում, իսկ ցրտահերկերում կատարվող ցանքսի ժամկետը նույն կուլտուրաների նկատմամբ սահմանել 4—5 բանվորական օրում:

48. Բառ զոնաների գարնանացան հացահատիկների ցանքսի պարտման ժամկետն որենտիր կարգով սահմանել:

Զ	Զոնայի №-ը	Ցանքսի տարածությունը հնական հողաբանությունը	ԳԱՐՆԱՆՑԱՆԻ ՀԱՅԱՍՏԱԿԱԿԱՐՏՄԱՆ ԺԱՄԿԵՏ	
			Ամիսների մասաթիվ	Քանի օրում
1	№ 1 զոնա		1 մայիսի	6—9
2	№ 2 զոնա		10 մայիսի	6—9

ԸՆ ԶՈՆԱՆԵՐԻ ԱՇԽԱՆԱՑԱՆԻ ԺԱՄԿԵՏ ՍԱՄԿԵՏ ԾԱՄԿԵՏ

Զ	Զոնայի №-ը	Ցանքսի տարածությունը հնական հողաբանությունը	ԱՇԽԱՆԱՑԱՆԻ ՑԱՆՔՍԻ ԺԱՄԿԵՏ	
			Ամսաթիվ	Քանի օրում
1	№ 1 զոնա	350	15 ողուտ.	20 ողուտ.
2	№ 2 զոնա	200	10 ողուտ.	15 ողուտ.

Երջանի աշնանացանի ավարտման վերջնական ժամկետ տահաւանելու սպասուսի 25-ը:

49. Բայ գոնաների ցանքով խոռոչյան որենտիր նորմասահմանել՝

Տ	Կուլտուրա սորտ	1 զոնա		2 զոնա	
		Շարքացան	Շաղացան	Շարքացան	Շաղացան
1	Աշնանացան ցորեն Ռևերյանկա	1,6	1,7	1,7	1,8
2	Գարնանացան ցորեն Ա. Դելֆի Բ. Պալուլացիա	1,4	1,5	—	—
3	Գարնան գարի Ա. Նուգանս Բ. Վարսակ	1,75	2,0	2,1	2,2
		1,75	2,0	2,1	2,2

50. Վոռոգվող հողերում ջրելու համար անհրաժեշտ է կորինել քաշել ցանքսին զուգընթաց:

51. Բոլոր ջրովի հողամասերում աշնանացանը ցանքով հետանմեջ ջրել, հողամասը կեղեվակալման դեպքում քեշին թեթեվ փոցինել: Ջրի զիմաց դնել նեղանցք ունեցող ցանց մոլախութեան մեջերը չանցնելու համար:

10. ՅԱՆՔՍԻ ԽՆԱՄՄՔԻ ԽՆԴՐՈՒՄ

52. Կավային և կավասկազային հողերում կատարված աշնանացանը, վաղ գարնանը փոցինել թփակալման մոմենտին, հողի քեշին: Եռյանման հողամասերում առանձին գեպքերում զարնանացանը նույնական փոցինել, նրա թփակալման փաղացից վոչ ուշ: Դանորոքյուն. — Աշնանացանի փոցիները կատարել անապահանքին, իսկ ավաղային հողերում փոցիները չել կատարել:

53. Քաղհանը կատարել այն հաշվով, վոր խոլովակակալման մոմենտին, զաշան ամբողջապես մոլախութերից մաքուր լինի, քորդ

հանը կատարել, բայ անհրաժեշտության դեպքում 2—3 անգամ մինչև ցանքսերի խոլովակակալմամբ:

54. Քաղհանկած մոլախութերը դաշտից գուրու հանել այրել, կամ ողտագործել իրեն անանակեր:

55. Փուշը քաղհանել յերեվալուն պես, ձեռքով և շղթիկով:

56. Յանքսերի հանգամիջյան ճանապարհների առուների յեղքը բիրին և թմբերի վրա տաճ մոլախութերը հնձել մինչև նրանց ծաղկակալումը (սերմերը չթմբելու համար). բայ անհրաժեշտության այդ աշխատանքը կատարել մի քանի անգամ:

57. Մինչև ցանքս կատարելու, դաշտերը քարերից մաքրել յեկայդաբն հեռացնել դաշտերից:

58. Չոռոգվող հողամասերում վաղ գարնանը կատարել աշնանացանի սնուցում և քեշը գալուն պես փոցինել, իսկ գարնանացանի սնուցումը կատարել փոցինելուց առաջ: Վոռոգվող հողամասերում բացի փոցինի հետ որված սնուցումը 1—2-րդ վոռոգման հետ միասին տալ և սնման պարաբռանցությամասն ամեն մի առանձին հողամասի համար փորոշված քանակի:

59. Վաղ կատարված և թփակալված աշնանացանների անկըպան մեկ անգամ քաղհանումն աշնանից համարել պարտադիր: Յանքսերում արգելել անասունների արածացումը:

60. Վոռոգվումը կատարել բայ հնարավորության 3 անգամ (յերեսով ջրային ռեսուլուններից): 1-ին բույսի թփակալման, 2-րդ հասկակալման, և յերբորդ հասիկակալման շրջանում: Յուրաքանչյուր անգամ ջրելին հարժարեցնել տեղի հողային և կիմայսկան պարմաններին և բույսի պահանջների:

61. Մինանման կբծողների դեմ համառարած պայքար սկսել ձյունը վերանալուն պես, այն հաշվով, վոր մինչեւ դաշտերում կանաչի յերեվալը բոլոր վարակված հողամասերում 1-ին և 2-րդ պայքարն ավարտված լինի: Եռյան կրկնել ուշ աշնանը, դաշտերից բերքը հնձելուց ու տեղափոխելուց հետո և ավարտել մինչեւ յունի գալը:

62. Բոլոր ցանքսերի նկատմամբ սահմանել մշտական հոկոս զություն, վնասատունների կամ հիվանդություններ նկատվելու դեպքում, անմիջապես հայտնել Հողբաժնին և ՄՏԿ-ին ու սկսել պայքարի աշխատանքները:

11. ՀԱՅԱԲՈՒՅԱՆԵՐԻ ԲԵՐՔԱՀԱՎԱՔԱՔԻ ԽՆԴՐՈՒՄ

63. Բերքահավաքի բոլոր մեքենաները (հնձող, կալսիչ կամ բայաց և այլն) սպառհովին հատիկակալերով, աշխատանքի բնույթ-

քամ պարբերաբար ստուգել, դատարկել հատիկակալները: Բերքահավաքի բոլոր մեքենաները նախորոք ախտահանել:

64. Կոլտնեկության ամբողջ ցանքսի նկատմամբ, ապահովել դաշտային պահակների հսկողությունը, մտնալորապես բերքահավաքի ամբողջ ընթացքում:

65. Բերքահավաքը սկսել ըստ առանձին հողամասերի հասունացման, առանց սպասելու ամբողջ դաշտի հասունացմանը:

66. Հացահատիկների հնձի համար վերջնական ժամկետ սահմանել 12—15 աշխատանքային որ, ըստ կուլտուրաների սահմանել հետեւյալ ժամկետները՝

ա) Աշնանացան ուկրաինկայի բերքահավաքը կատարել նրա ժոմային հասունացման շրջանում ու ավարտել այդպիսին 3—4 րան: որում:

բ) Գարնանացան ցորենի բերքահավաքը կատարել, նրա ժոմային հասունացման վերջին և լրիվ հասունացման սկզբնական շրջանում ու ավարտել այդպիսին 6—8 որում:

գ) Գարու բերքահավաքը սկսել լրիվ հասունացման սկզբին և ավարտել վոչ ուշ քան 5—8 որում:

դ) Հացահատիկների բերքահավաքի ավարտման վերջնական ժամկետ սահմանել մինչև սեպտեմբերի 25-ը:

67. Ամբողջ հնձված հացահատիկը խուրծ կապել դիպել յեզ առանց ձգձելու փոխադրել կալ և դեղ դնել:

68. Բարդոց դնելիս զեկավարիել հետեւյալ կանոններով:

ա) Խուրձերը դասավորել հասկերով գեպի ներս:

բ) Բարդոցները դաշտում դասավորել մի գծի ուղղությամբ այն հաշվով, վոր հնարավոր լինի բարդոցների շարքերի մեջ, բերքահավաքի զուգընթաց կատարել խոզանի յերեսվար:

գ) Բարդոց դնելուց հետո, անմիջապես ամբողջ դաշտում թափած հասկերն հավաքել թե ձիռ և թե ձեռքի փողխով, իսկ անհրաժեշտության դեպքում նաև ձեռքով:

դ) Սայլում դասավորելիս յուրաքանչյուր բարդոցի անդք փողխել, կամ ձեռքով հավաքել բոլոր թափած հասկերը:

69. Դաշտում բարդոց, կամ խուրծ յեղած ժամանակաշրջանում, արգելել անասունների արածացումը, կամ տվյալ դաշտում աշխատանքը վերջանալուց հետո ավելորդ անձանց շրջագայությունը:

70. Սահմանել իրեն կանոն, վոր դաշտավարական բրիգադի բրիգադավարները, պարտավոր են ամեն որ հատուկ արձանագրությամբ ընդունել դաշտում կատարված բերքահավաքը զնահատելով կատարված աշխատանքի վորակը, դաշտի բերքահավաքը ավարտված համարել այն ժամանակ, յերբ դաշտը բրիգադի բնակության համապահը:

71. Պարտադիր կուռօք կարում զեղերի մոռ ջրով մեր ուս-

կառներ, ջրամբարներ, դույլեր, բահ ունենալ:

Դեղերի շուրջը վարել և նրանց մոռ ունենալ ավազակույտեր, կալում և դեղերի մոռ կողմնակի մարդկանց մուտքը արդպել ինչպէս և վոչ մի պայմանով թույլ չառ ծիսել, ունենալ մշտական պահակներ, զանդ, սուլիչ և այլն:

72. Կալումը սկսել հնձի աշխատանքներին զուգընթաց, վոչ ուշ քան հնձի սկզբից 3 որ հետո, կալումը կատարել անպայման լուս առանձին բրիգադակաների:

73. Բերքահավաքի համար անհրաժեշտ գյուղատնեսական ամբողջ ինվենտարը, նախքան բերքահավաքն ախտահանել, թույլ չտալ հացահատիկ կալսել հին կալերում, առանց նախապես այդպիսիք կիզելու, ախտահանելու:

74. Բերքահավաքին անհրաժեշտ ամբողջ ինվենտարի ձեռք բերումն ու վերանորոգումն ավարտել վոչ ուշ քան բերքահավաքի սկզբից 30 որ առաջ: Նույն ժամկետին ավարտել բոլոր միջուկներ և դաշտամիջյան ճանապարհների և կամուրջների վերանորոգումն ու կարգավորումը:

75. Թաց քյուլացը նախորոք չորացնել և նոր միայն թույլ տալ կալսիչով կալսելու: Կալսիչների 20 ժամյա անխափան աշխատանքը, լրիվ չափով ապահովելը պարտադիր ե:

76. Կալիչների աշխատանքին հարմարեցնել քամհար սերմականիների և արեների աշխատանքը, այն հաշվով, վոր 1-ին հերթին ապահովի վերջացիկ տարիա աշխատանքն սերմագույի անհապաղ սերմագումն ու ապա գալիք գարնանացանի սերմացույի լրիվ դուռը:

77. Կամերով կալսած թեղը արգելել մեկ որից ավել առանց քամահարելու թողնել կալում:

78. Կալից գուրս յեկած և վոչ մի հատ հացահատիկ առանց կըսելու համապատասխան նարյատ կազմելու պահեստում տեղափորելը խստիվ արգելել:

79. Հացահատիկն ամբարել նորմալ խոնավության վեպքում միայն, 12—13 տոկոսից ավելի խոնավ լինելու դեպքում հացահատիկը չորացնել լրիվ, ապա նոր ամբարել:

12. ԿՏԱՎՀԱՏԻ ՊԱՀԱՆՁԼ ԴԵՊԻ ՀԱՂԲ ՅԵՎ ՆՐԱՆՑ ՏԵ-
ՂԻ ՑԱՆՔՍԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵԶ

80. Կատավատը լավ բերք եւ տալիս բոլոր տեսակի լավ սարուկություրա ունեցող սեղանողերում և շագանակագույն հողերում: Ծանոթ վոչ ստրուկտուրային հողերը առաջացնում են կեղե և պիտունի չեն կտավհատի համար:

81. Կտավհատի ցանքը սուածին հերթին անհրաժեշտ եւ կա-

սարել բազմամյա խոտարույսերից (կորնդան, առվույտ), շար-քահերկ կուլտուրաներից (կարտոֆիլ, յեղիպատացորին) հետո, կամ ծայրահեղ դեպքում մեկ տարի հացահատիկներով դրազեց-նելուց հետո:

82. Նույն հողում կտավհատի ցանքսը կարելի յէ կրկնել 5—6 տարուց հետո միայն:

Ա. ՀՈՂԻ ՄՇԱԿՈՒՄԸ

83. Կտավհատի ցանքսի համար հատկացվող խամ հողերի և բազմամյա խոտարույսերի վաղ ցրտահերկը կտարել 20—22 սմ. խորությամբ:

84. Խամ հողերի և խոտարույսերի տակ յեղած հողամասերի բացակայության, կամ պակասի դեպքում կտավհատի ցանքսի համար կարելի յէ առանձնացնել աշնանացանի տակ յեղած պարարտացված հողեր: Այս դեպքում անհրաժեշտ է կտարել խո-զանի յերեսվար: Հետագա խոր ցրտահերկով 20—22 սմ. խորությամբ:

Բ. Պարարտացումն ու ցանքսերի սեղուցումը

85. Կտավհատի հատկացվող հողամասն անհրաժեշտ է պա-րարտացնել տեղական, կամ հանքային պարարտանյութերով, լավ այրված փթած գոմաղը անհրաժեշտ է տալ աշնանից, հեկտարին 20 տոննա և ապա կտարել խոր ցրտահերկ:

86. Հանքային պարարտանյութերից սուտագործվում է սուսեր ֆուֆատ, և առողջում՝ սուլֆատի խառնուրդով: Սուսերֆու-ֆատի նորման մեկ հեկտարի համար 3 ցենտներ: Ամռնում սուլֆատի և սուլփերֆուֆատի խառնուրդի դեպքում 2 ցենտներ:

87. Կտավհատը լավ բերք և տալիս անուցման դեպքում, վորը կտարվում է պարարտանյութը ձեռքով շաղ տալու միջոցով: Նույցումը կտարել խոնավ ամպու յեղանակին:

Գ. Հողի հախացանիսային մշակումը

88. Կտավհատի համար առանձնացված ցրտահերկը, վազ գարնանը փոցին զեղզակ փոցին վարի հակառակ ուղղու-թյամբ, ցանքսից առաջ կտարել կուլտիվացիս 6—8 սմ. խորությամբ յեվ ապա փոցին:

89. Խամ հողերի և բազմամյա խոտարույսերի տակ յեղած հողամասերի ինչպես և կոճղ արմատային մոլախոտերով վարակված հռ զերի կուլտիվացիս վետք և կտարել 8—10 սմ. խորությամբ զապանակալոր կուլտիվատորներով, յերկու յերես վարի հարկա-

ռակ ուղղությամբ հետագայում վոցինել, հավաքել մոլախոտերը, հեռացնել գաշտից և այրել:

Դ. Յ ա ն ֆ ս

90. Առանց սերմացույի համապատասխան վորակը հաստատող լարուստորիայի վկայականի, արգելել կտավհատի ցանքսը:

91. Յանքսը կատարել վաղ, գարնանացանների հետ միասին, առհմանել առաջին զոնայում ցանքսի նորման մեկ հեկտարին 50 կիլո, 2-րդ զոնային, մեկ հեկտարին 60 կիլո:

92. Մեքենահարմար հողամասերի ցանքսը կատարել շարքա-ցանով: Մերմերի խորությունը 3—4 սանտիմետրի:

93. Մոլախոտերի դեմ պայքարելու նպատակով կատարել 2—3 անգամ քաղհանում:

Ե. Պայքար վիճակուների և հիվանդությունների դեմ

94. Կտավհատի ցանքսերն վնասատուներից և հիվանդություն-ներից զերծ պահելու համար անհրաժեշտ է հետեւյալ միջոցա-ռումները զարնան վաղ ցանքս կատարել:

95. Մերմացուն զտել հատուկ մեքենաներով (կուսկուտայի զտիչ-կտահավատի հատուկ զտիչ): (—ըա—?)

96. Մերմերը յենթարկել չոր ախտահանման (Դավիդովի պրե-պարատով 1,5 կիլո մեկ տոննային):

97. Գարնան ընթացքում գաշտում կտավհատի լու հայտնա-րելու գեղքում ցանքսը փոշոտել կրեմֆոտորային նատրումով մեկ հեկտարին 10 կիլոգրամի չափով, կամ մինդեղաթթվուտա-յին կալցիում մեկ հեկտարին 10 կիլոգրամի չափով:

98. Գործող միջաների դեմ պայքարելու համար, (սովկայի թրթունները) փոշոտումը կատարվում է ավելի զարգացած բույ-սերի վրա, նույն թույներով կրեմֆոտորային նատրում մինչեւ 12 կիլոգրամ, կամ մինդեղաթթվուտային կալցիում 10 կիլոգրամ, սերմը նախքան պահեստ տանելը լավ չորացնել:

Զ. Ս ե ր մ ա գ ա տ ե ր ի ա ն ե ր

99. Մերմագաշտերի համար հատկացնել, աշնանից լավ մշակ-գած պարարտացված մոլախոտերից մաքուր ցրտահերկ:

100. Յանքսը կատարել վաղ գարնանը, շարքացանով ամառ-վա ընթացքում կատարել 3—4 քաղհան:

101. Բերքահավաքը կատարել լրիվ հասունացման ժամանակ, ըստ վորում խիստ ուշագրություն գարնանը սերմաղաշտերից ստացված կտավհատի առանձին կարուման ու ամբարման վրա:

102. Մասսայական ցանքսերի բերքահավաքը կատարել այն ժամանակ, յերբ կտավհատի պառողը ստանում է մուգ գույն, իսկ սերմերը ստանում են գորշադույն:

103. Կալսումը կատարել բերքահավաքին զուգընթաց, լրիվ չորացման ժամանակ:

104. Ջմոան ընթացքում պարբերաբար հսկել առանձնացված սերմերի վիճակը, վնասատուներ հայտնաբերելու դեմքում միջներ ձեռք առնել այդպիսիք խապա վոչչացնելու համար:

105. Մինչև սերմացույի ամբարելն ախտահանել պահեստը և նկատասին կազմել հատուկ արձանագրություն:

1. ԿԱՐՏՈՒԹԻՒԾ ԱՍՊԱՐԻՉՈՒՄ

Ա. Հողամասի նախապատրաստական աշխատանքները

1. Կարտոֆիլին հատկացվող հողամասը, խոր հերկը կատարել վաղ աշնանից 22—25 սմ. խորությամբ: Առանց փոցիներու թողնել մինչև գարուն:

2. Աշնանալիք, ցրտավար կատարված հողամասերում, գարնանն առաջին իսկ հնարավորության դեպքում (քեշին) կավոտ, ծանր և ջրովի հողամասում կատարել կրկնալիք 20 սմ. խորությամբ: Անջրդի և չորային պայմաններում կրկնալիքը փոխարեն 5—8 սմ. և կուլտիվացիայով, կամ մեկից յերկու յերես դիդ գագով փոցինել:

3. Երբե կամոն, արգելել կարտոֆիլի տեղը կարտոֆիլ ցանել, ինչպես և լարավորություն ու փոշիանման քոսով վարակված հողամասերում 2—3 տարի կարտոֆիլի մշակումը:

4. Տեղական պարարտանյութերով պարարտացումը կատարել հիմնականում աշնանից—աշնանը խոր վարի տակ, այն հողամասերը, վորոնք աշնանից չեն պարարտացվել, պարարտացնել գարնան կրկնալիքի, կուլտիվացիայի, կամ փոցինի տակ: Աշնանն ոգտագործել թարմ ու կիսափթած գոմազը, գարնանը միայն փթած գիճակում: Ջմոան դաշտ փոխարժված պարարտանյութերը կույտերով դասավորել, ցրումը կատարել գարնան կրկնալիքի, կամ կուլտիվատորի տակ: Երբե որենամբ նորմա, առաջարկել հեկտարին պամազը 40—50 տոննա: Խառն աղը 15—25 տոննա:

5. Բոլոր կոլտնտեսություններում, առանձնացնել սերմացաշերի համար, աշնանալիք պարարտ և մասսի հողակտորներ յելնելով բերքատվության և սերմացույի պահանջից:

2. ԱԵՐՄԱՑՈՒՅԹԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ՅԵՎ ՅԱՆՔԸԸ

6. Յանքսի նախորյակին կազմուկերպել սերմացու կարտոֆիլի ըստ զույնի ընտրություն, իբրև սերմացու ոգտագործել 50 յեկ ավելի մեծ գրամանոց միագույն առաջի պալարներ: Հողրածնի կամ ՄՏՀ-ի թույլատվությամբ՝ իբրև բացառություն թույլաբըել սերմացույի համար (բացի ժողովրդական սորտից) ավելի մանր պալարների ոգտագործումը: Կարտոֆիլի արբեր զույնի պալարների ցանքսը կատարել առանձին հողակտորներում:

7. Կարտոֆիլի սերմացույի նորման 17—18 ց. մեկ հեկտարին, մեկ բնում տնկել միայն մեկ առողջ պալար:

8. Կորոնտեսության ունեցուծ անհակավոր կարտոֆիլի սերմացույով, 1-ին հերթին ապահովել սերմաղաշտերը: Կարտոֆիլի ցանքուը կատարել մարդութերով, կամ գութանի տոկի, առաջադրուել շարքը-շարքից՝ միջանա օրոտին 65—70 սմ. և ուշահատին 70 սմ., թուփութից՝ 40—45 սմ. հեռավորության վրա:

9. Կարտոֆիլի պայարի տնկելու միջին խորությունը առաջանալ, թիթեզ ավագային հողերում և չորային պայմաններում 10—12 սմ. կալվային ծանր հողերում և խոնաց պայմաններում 8—10 սանամիները:

Կարտոֆիլի ցանքսը կատարել ովլատ գյաւղի կարանտեսության հացահատիկային կուրտուրաների ցանքսը զարգացնելու սկզբունքի համաձայն 5—7 բան: որում:

3. ԽՆԱՄՄՔԻ ՅԵՎ ՄՇԱԿՈՒՄԸ

10. Կարտոֆիլի ծիլերը յերեվարու նախորյակին, ամբողջ ցանքսը զիգզակով մեկ յերկու յերես փոցինել:

11. Բաղհան-փիփրեցում կատարել այնքան, վորքան անհրաժեշտ և կարտոֆիլի ցանքսը մոլախոտերից մաքուր և հողամասը փիփրուն զրությամբ պահելու հոմար: Սակայն վոշ պակա հինգ անգամից:

ա) Կարտոֆիլի ցանքսը շարքերը նշարժելու պես:

բ) Առաջին քաղհան փիփրեցումից 8—10 սր անց:

գ) Առաջին բուկը առլու նախորյակին:

դ) Առաջին և 2-րդ բուկը առլու միջանկալ ժամանակաշրջանում:

յէ) Կարտոֆիլի թփի ծաղկման վերջին շրջանում:

Քաղհան փիփրեցման աշխատանքները կատարել յուրաքանչյուր անգամ, 2—3 բան: որում: Էստ վորի 1-ին փիփրեցումը կատարել այնպէս, վոր կարտոֆիլի մատղաշ ծիլերը հողով չծածկվեն յեկ թմբեր չառաջանան:

12. Կարտովիլի բուկը տալ չըսպի և խոնավ պայմաններում
2—3 անգամ, անջրդի և չորային պայմաններում արգելել բռեկ
առավ: Այդպիսին փոխարինել փորեցմամբ: Կարտովիլի ցանքով
բռեգը տալու աշխատանքները կատարել յուրաքանչյուր անգամ
3—5 րան։ որում, բայ վորում՝

ա) Յերբ թուժի ունի 13—15 սմ. բարձրություն:

բ) Առաջին սուզը տալուց 8—10 որ անց:

13. Քաղհանեմիխրեցման, ինչպես և բուգը տալու աշխատանք-ները կատարել ձիաքարչ և ձեռքի քաղհանից ու բուգից մեքենա-դործիքներով :

14. Կարտոֆիլի ջուրը առեւ

ա) Յանքսից 28—30 որ անց (առաջին բուգ տախու նախորյակին) Բ. և Գ. Թփի ծաղկման ըրբանում : Հետագա ջրելու աշխատանքները կատարել բույսի պահանջից յենելով, զերծին ջուր պատրագարեցնել բերքահամարքից 15—20 որ առաջ :

ծանոթություն առ արքային տարածության փխրեցում:

15. Կարտոֆիլի սերմագաշտերն ու տեսակավոր մասսայական ցանքսերը, 1—2-րդ ջրին զուգընթաց իրքի մնուցում տալ տեղական պարարտանյութեր, որենտիր ձևով առաջադրել հեկտարին գոմագլոբ 2—3 տոննա: Կղկղանք 0,1—0,2 տոննա, մեղաջուր 0,8—1 տոննա:

16. Կարտոֆիլի սերմագեղաշերն ու տեսակավոր մասնայական տմբողջ ցանքը թփի ծաղկման շրջանում յենթարկել ապրուս-դիալի:

4. ՊԱՅՔԱՐ ՎՆԱՍՏՈՒՆԵՐԻ ՅԵՎ ՀԻՎՈՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԵՄ

17. Կալուսովի իր ամբողջ ցանքսերը, իր և նախազու շական պլաֆիլատիվիկ միջոց ֆիտոֆառորայի հիվանդության դեմ սրսկել 1 տօկսասային բորբոքյան հեղուկով, անձրևային խոնավ և հիվանդության ուժեղ պայմաններում բուժումները կրկնել:

18. Յանքսերում նկատվող այլ հիմնադրություններով վարակված թփի, ինչպես որինակ՝ գանգը բռնությամ (տերեւների կուչպարբ) - աև վառ բազմացողանաթյանով վարակված թփերն արժատախիլ անել, խոր թաղել, կամ այրել; Բերքահավաքի ձմռանտախիլ անել, խոր թաղել, կամ այրել; Բերքահավաքի ձմռանտախիլ անել, խոր թաղել, կամ այրել; Ենթադրությունները սերմը ջոկել և հեռացնել հիմնադրություններով վարակված բոլոր տեսակին:

19. Կարտոֆիլի ցանքսեղում վնասառու կարտոփինայի յերեցարութիւնը իր ժամանակին ահազանգել և սկսել պայքարը համաձայն Հրահանգի:

5. ԲԵՐՔԱՀԱՎԱՔՆԵՐԸ ՅԵԿ ԱՄԲՈՐՍՅԵՒՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՎԵՐԸ

20. Կարտոֆիլի բերքահայվաքը կատարել ըստ սորտերի, ոեր-մացույթի նպատակով պալրարի Փեղիոլոգիական հասունացման, իսկ սորտինային կարիքների համար պալրարի տնտեսական հասունացման ժամանակ, արեւոտ և չոր եղանակներին 7—10 բան. որում:

21. Կարտոֆիլի սերմադաշտերի, տեսակավոր ցանքսերի բերքահափաքը, փոխադրումը և ձմռան ամբարումը ըստ սորտերի և կատեգորիաների կատարել առանձին:

22. Բերքահավաքից անմիջապես անց կազմակերպել զիգոս-կով հոգածափ յերկու յերես փողխում, հավաքելով դաշտում բոլոր մասցած պայտահերթը:

23. Սերմացույի համար, կարտովիլի ընսրությունը կատարել դաշտում, բերքահավաքին գուզահեռ։ Առանձին դեպքերում սերմաղաշտերի և տեսակալոր մասսայական ցանքսերից սերմացույի սրահանջմող քանակը չափահովելու դեպքում, պակասորդը լրացնել կարտովիլի տնտեսության մնացած ցանքսի բերքից, ընտրելով լավագույն պայմանները։

24. Բերքի գաշտից փոխադրումը կատարել նախապես հարաբերացված փոխազբական միջոցներով։ Արգելել կարտոֆիլի բերքի փոխադրումների ժամանակ սրածայր վերջավորությամբ մեղադյան գործիքների գործառությունը։

25. Ալբանցոյի Համար Ըստով 50 հ. ավելի բարձր գրամական միանգամատախառն առողջ պայտարներ:

26. Բերքահավաքից մեկ ամիս առաջ ավարտել կարտոֆիլի պահպաների, փոխադրական միջոցների սուզման, վերանորոգման և սերմացու կարտոֆիլի անվտանգ ամբարումներին հարժարեցնելու թշչակն և պահպանների ախտահանման աշխատանքները: Երբե կանոն, սերմացու կարտոֆիլի ամբարումը ըստ սուստերի կատարել բուրգ խրամատներում և տրանշեյներում տուանձին զեղքերում Հողբաժնի կամ ՄՏԿ-ի համաձայնությամբ թույլատրել պահպանային ամբարման ձևը:

27. Բուրգ խրամատի տեղի ընտրությունը, փորձան աշխատանքները, ոդանցքների վերանորոգման պակասի ձեռք բերման, ինչպես և ջերմաչափերի, ծզնոտի ձեռք բերումն ավարտուել կարողութիւն բերքահամարելու վու։ Պան հինգ որ տառած։

6. ԱԵՐԻՄԱՑՈՒՅՔ ԶՄՈՒՄՆ ԽՆԱՄՔԸ

28. Բարեգ իրավաւոներում, ինչպես պահեստներում, սերմացուն կարողիքի չերտի բարձրությունը սահմանել 1—1,25 մետր։

29. Կարտոֆիլի սերմացու մի ամբարման ընթագքում պահպա

նել՝ ցելսուսով 2—3 աստիճանի ջերմություն։ Ջերմաստիճանի տօսանումները կարգավորել սղատար խողովակների միջոցով, ինչպես և ըստ ծածկորդ շերտի նոորացման և ամփերացման։

30. Ջերմաստիճանի չափումների համար ունենալ, ըստ բուրդի խրամատների, պահեստների «դիտողությունների տեսք» ազգութերունակի ցուցմունքներով պարբերաբար գրանցել ջերմաստիճանի տատանումները։

31. Բուրգավորժան առաջին որերն իրեն կանոն, (նայած կը լիմայական պարմաններին) բուրդ խրամատների գաղաթը չծածկել հողով, բաց թողնել բոլոր ողանցքները։

Բուրդ խրամատի հողաչետի ավելացումն, ողանցքների ծածկ կուժը հարմարեցնել սառնամանիքներին։

32. Խուսափել ձմռան ընթացքում ամբարված ուրմացուն (կարտոֆիլը) մասսայական ձեռվ պարբերաբար ընտրությամբ և տեղաշարժեր կատարելու։ Կազմակերպել սիստեմատիկ հոփողություն, առանձին անկյուններում փչացումների բարձր տոկոս առնենալիս, ընտրություն և տեղափոխում կատարել։ Մերմացու կարտոֆիլի ամբողջական ընտրություն և փոփագրումներ կատարել (բուրդ խրամատներից, պահեստներից) միմիայն Հողբանմէնի, կամ ՄՏԿ-ի գիտությամբ։

33. Իրեն կանոն արգելել գարնան յեղանակները տաքամալիս, բուրդ խրամատների հողի ծածկող չերտի նոորացում ու որդատաք ժամերին ողանցքների բացումը։

Բուրգում, պահեստում ողանցքները բանալ միմիայն գիշերներն, առավոտյան և յերեկոյան հով ժամերին։

34. Կոլտնտեսություններում առանձնացնել ուրմացու կորափիլի ձմռան ամբարման պատասխանառու աշխատղներ։

12. ԳԱԼՄԱԹՅԱՆ ՅԵՐԻՑՈՒԿԻ ՄՇԱԿՄԻՄԸ

Ա. Հողի բնորությունը.

35. Դարմաթյան յերիցուկի մշակության համար պետք է առանձնացնել արաքտրա հարմար բերքի և վոչ կեղեվակալիքով հողամասեր։ Եղորաքայլ ճաճճային հողերը միանգամայն անպատճեն։ Դարմաթյան յերիցուկի ցանքի համար։

Դարմաթյան յերիցուկի ցանքի համար ընտրել հարթ հողամասեր, չի կարելի ցանքս կատարել ուժեղ թեքություններում փորովհետեւ սերմերը կարող է լվացվել ճյան և անձրեվալիքներից, դարմաթյան յերիցուկն ուժեղ կերպով տուժում է խոնավությունից, ստորերկրյա ջրերին մոտ հողամասերում յերիցուկ ցանքը արգելվում է։ Դ. յերիցուկի համար անհրաժեշտ է հատկացնելու ու շագանակագույն հողեր, խճային, կրային, թեթեկ կազմ-

ափակային հողերը։ Հողամասերը պետք է մաքրված լինեն ժողովածություն քարերից և կոճղամատներից։ Դ. յերիցուկը պետք է ցանել աշնանացան ցորենից շարքահերկերից կամ բազմամյա խութերից հետո։

Բ. Հողի պարարտացումը

36. Դ. յերիցուկը պարարտացնել գոմաղբով, հեկտարին 40 տոննա, պարարտանյութը հողի մեջ մտցնել վարդի հետ միաժամանակ։ Հանքային նյութերով պարարտացում կատարելիս ղեկավարվել աղբոնոմի ցուցմունքով։ Դ. Յերիցուկի խնամքի ժամանակավորվել աղբոնոմի ցուցմունքով։ Դ. Յերիցուկի խնամքի ժամանակավորվել աղբոնոմի ցուցմունքով։ Հանքային պարարտանյութերով սուլցում կատարել հատուկ չափանիքներին։

Հանքային պարարտանյութերով սուլցում կատարել հատուկ չափանիքների համաձայն։

Գ. Հողի մշակումը

37. Դ. յերիցուկի ցանքը պետք է կատարվի նախորոք լավ հախապատճենոված հողամասերում հիմնական վարը պետք է կատարել իոր 20—22 սմ. իւ. անմիջապես յերկու յերես փոցիսում հակառակ ուղղությամբ։ Նախքան ցանքը, կատարել կուլտիվացիան և փոցիսում այն հաշվով, վոր հողամասը ունենա հարթ մակերես։ Նախացանքսային մշակումը պետք է ամբարված լինի 10 որ առաջ։ Ընտրած հողամասի յուրջը հանել առուներ անձրեկիների և ձյան ջրերը հողամասից հեռացնելու նպատակով։

Դ. Ց Ա Բ Ա

38. Ցանքը կատարել շարքացան և բնացան։ Շարքացան կտարել սովորական ձիռ շարքացանով, շարքը-շարքից 60 սմ. տարել սովորական ձիռ շարքացանով, կատարել ուշ աշնան այն հաշվառվորության, ձմռացանքսը կատարել ուշ աշնան այն հաշվառվորության, միան մի սերմ չծիլ։ Մեկ հեկտարի ցանքսի նորման՝ միան մի սերմ հերի 60 տոկոս ծլունակության գեպքում սահմանել 4 կիլոսերմերի 60 տոկոս ծլունակության գեպքում 3 կիլոգրամ։ Շարքագրամ, իսկ 80 տոկոսի և բարձրի գեպքում 3 կիլոգրամ։ Շարքագրամ, իսկ 80 տոկոսի և բարձրի գեպքում 3 կիլոգրամ։ Հանքամասի մարկիրովկա կատարելուց հետո միայն։

Ցանքի իորությունն սահմանել 1—1,5 սմ։

Ե. Ցանքանիքի գարնան խնամքը

39. Գարնան դաշտ դուրս գալու առաջին իսկ հնարավորությունը 23

թյան դեպքում, պետք և կատարել ցանքսի մնացում, փթած գոմաղբով, կամպոստով:

Առաջին ծիլերը դուրս գալուց հետո կատարել փխրեցում յեզ քաղցան: Նորացումը կատարել յերբ յերեցում են 2—3 դուրդ իւկական տերելիները: Ցանքսի առաջին տարվա պլանացիտներում նորացումը կատարել՝ բույսը-բույսից թողնելով 15 սմ. և վրա, յերկրորդ տարին նորացումը կատարել բույսը-բույսից թողնելով 30 սմ. և վրա: Հետագա կուլտիվացիաների և քաղցանի աշխատանքները կատարել այն հաշվով, վոր բույսը ձմեռելիս շարունակ փուլը հողում գտնվի: Ցուրաքանչյուր քաղցանից հետո մոլախոտերը հետացնել գաշտից և արել: Նախորդ տարիների պլանացիաներում 1—3 և ամենի տարեկանի քաղցանի, կուլտիվացիայի աշխատանքները կատարել նույն կարգով:

9. ՏՆԿՈՒՄ (Սածիրում)

40. Սածիլի 8—10 սմ. բարձրության դեպքում կատարել անկում, (սածիլում): Սածիլումը կատարել ամպու որերին: Սածիլի համան աշխատանքները կատարել ըստ հնարավորին, անձրեվներից հետո (ցանքսի որերին):

Սածիլումը կատարել միջարքային տարածություն ընդունելով 60 սմ., բույսը-բույսից 30 սմ., տնկման աշխատանքները կատարել անձրեվներից հետո, վաղ գարնանը, կամ աշնանը, տնկումը ամբարտելուց 12—15 որ հետո կատարել վերանորոգում:

Ե. Բերքահավաք և չորացում

41. Դ. յերիցուկի բերքահավաքը (ծաղկի հավաքը) կատարել 5—7 րան. որում: Բերքահավաքը կատարել մեքնաներով և ձեռքով: Հավաքված ծաղիկները փոել 3 սմ. շերտով ողային, կամ կրակային չորանոցներում: Ողային չորացումը կատարել շենքերում, կտորներում և այլն: Վերջին դեպքում անհրաժեշտ է հավաքված ծաղիկն անմիջապես փոել 3—4 ժամ արել տակ. (նախորդ ծաղկի տակ փոել փարաներ, խսիլներ և այլն). և ապա տեղափոխել շենքերի մեջ:

Չորացման պրոցեսում պարտադիր կերպով ծաղիկները շուրջ տալ փայտյա փոցիներով, որեկան 2—3 անգամ:

Ծաղիկների վերջնական չորացումը կարելի յև կատարել ավելի հաստ շերտով (5—7 սմ.), չորացած ծաղիկները դասավորելու հակերով և պահել մամլած վիճակում, չոր շենքերում:

Ը. Դ. Յերիցուկի սերմերի հավաքը

42. Յերիցուկի լավագույն ցանքսից (լավ զարգացած բույսերով և ծաղիկներով), վորոնք զերծ են հիվանդություններից յեզ 30 տոկոսի ծաղկելը: Չորացնելուց հետո փոխադրել և զեզ գնել:

24

միջատների վնասվածքներից, առանձնացնել սերմերի համար անհրաժեշտ տարածություն: Սերմերը հավաքել հզոր ածեցողություն ունեցող բույսերից, իսկ մնացած թույլ բույսերի ծաղիկները նախորդոք կարառել ծաղիկների բերքահավաքը ժամանակակից մանակ: Սերմերի հավաքը կատարել, յերբ պահանջերել լրիվ կոռուցանան, իսկ կենարունի ծաղիկի թերթիկները կլինեն բաց շաղանակագույն: Հասունացած ծաղկափթթության բերքահավաքը կատարել ժանգաղներով, ձեռքով և հավաքելուց հետո, փոել լավ ողափոխվող շենքերում բարակ շերտով, մաղերի վրա 20—25 աստիճանի տաքության տակ, լրիվ հասունացման համար: Չորացած ծաղիկները կալսել և քամհարել: Դ. յերիցուկի հասունացած սերմերի նորմալ խոնավությունը պետք է լինի 13 տոկոս: Սերմերը լցնել պարկերի մեջ յեզ պահել չոր շենքում:

Թ. Պայմար վնասառությունների յեզ հիվանդաւրյունների դեմ

43. Դ. յերիցուկի պլանացիաներում (ցանքսերում) վնասառուների (վագրափղիկ) և հիվանդություններ յերեվալուց անմիջապես հետո կազմակերպել պայքար ագրոնոմի ցուցմունքներով հատուկ հրահանդի համաձայն:

8. ԿՈՐՆԴԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Ա. ՑԱՆՔԱՐ

44. Կորնդանը շարքացան կատարելիս, ցանել ցանված հացատիկի շարքերին ուղղահայց:

45. Սերմացույի նորման ընդունել մեկ հեկտարին, շարքացանի դեպքում 80 կիլո, իսկ շաղացանի դեպքում 1—1,1 շենտոներ:

46. Կորնդանի ցանքսը պետք և կատարել լարուրատորիայի կողմից կոնդիցիոն ճանաչված սերմերով: Ցանքսի խորությունը սահմանել 3—4 սմ.

47. Մինչև ցանքսը, կատարել կորնդանի սերմերի սիտրոգինի-գացիա (ախտահանում):

Բ. ԲԵՐՔԱՀԱՎԱՔ

48. Խոտի համար հնձվող կորնդանը, պետք և հնձել մինչել 30 տոկոսի ծաղկելը: Չորացնելուց հետո փոխադրել և զեզ գնել:

49. Սերմ ստանալու համար ցանքսած կորնդանը, պետք և հընել, յերբ հունդերը մուգ կանաչ գույնից անցել են բայց կանաչ գույնի ներքեվի հունդերից 2—3-ը գորշացել հասունացել են,

25

Հետո կազմել փոքր իրավելուներ և չորացնել: Կորնգամել առղափախութ իրս առղերի ժեղ ըրեղենդ, կամ խօիներ փոել: Կալսումը կատարել խնամքով, սերմացուները լավ չորացնելուց հետո պահպանել չոր նախորոք ախտահանված պահեստում: Խստիվ արգելել ամբողջ աարխա ընթացքում կորնգանի ցանքսի վրա անսուններք արածացնել:

9. ԳԱՐՆԱՆԱՑԱՆ ՎԻԿԻ ՄՇԱԿՈՒՄԸ

Ա. ՑԱՆՔՍԻ ԽՆԴՐՈՒՄ

50. Վիկա չի կարելի ցանել ստորերկրյա ջրերին մոտիկ, ավազային թեթեվ հողամասերում, ինչպես նաև հարավում գտնելով հողամասերի չոր լանջերի վրա:

51. Ցանքսը պետք է կատարել միայն կոնդիցիոն սերմերով, Հեկատրին մեկ ցենտները: Վիկայի համար հատկացված հողամասերն աշնանը պետք է հերկել 18—20 սմ. խորությամբ գարնանացներից առաջ հերկված հողամասը կրկնավարել ու խնամքով փոցինել:

52. Վիկայի ցանքսը պետք է կատարել վաղ գարնանը, (Հացատիկային կուլտուրաներին զուգընթաց): Խոտի նախատեսվող ցանված վիկային խառնել դարի, կամ վարսակ 50—60 կիլոգրամի չափով (մեկ հեկտարին) վիկը չպահելու նպատակով: Ցանքը կատարել սերմերը նիտրոգենացնելուց հետո:

53. Խոտի համառ վիկը պետք է հնձել ծաղկման շրջանում, հնձելուց հետո զդուշությամբ չորացնել և փոխադրել դիղել:

54. Սերմի վիկան պետք է հնձել, յերբ պատիճները 50 տոկոս հասունացել են. չորացուվը պետք է կատարել զգուշությամբ: Հավաքը կատարել առավոտյան ցողին: Տեղափոխելու աայլերի տակը փոել խօիներ, սերմի կորուստ չտալու նպատակով:

Կատարմը կատարել առանց ձգձգելու: Սերմացուն պահեստի նախորոք ախտահանված չոր պահեստում, նախորոք սերմը լավ չորացնելուց հետո:

10. ՍԻԼՈՍԱՑԻՆ ԱՐԵՎԱՆԱՂԻԿԸ

Ա. Մշակումը

55. Արեվածաղկին հատկացված հողամասը պետք է վարել աշնանից 20—22 սմ. իսկ վաղ գարնանը լուշենիկներով փխրացնել և լավ փոցինել:

56. Պարարտացումը տալ աշնանը, իսկ գարնանը տալու դեպքում հողը փոցինել, առա 30—40 առն գոմալը ցրել և կրկնավա-

րել 10—14 սմ. իսկաչածի յերկու անգամ փոցինել և ցանել չափ-չափանով:

57. Արեածաղկը պետք է ցանելայն չափերով, 50—60 սմ. միջամատը պահպան տարածությամբ, 3—5 սմ. խորությամբ: Արեածաղկը բարձարացնել մեկ հեկտարին 30—40 կիլոգրամ:

Բ. ՑԱՆՔԻ ԽՆԱՄՔԸ

58. Հաղը կեղեվակալելուց անմիջապես հետո փխրացնել միջանակային տարածությունները: 1-ին քաղհանը և նախնական նոսարքային տարածությունները: 1-ին քաղհանը և նախնական նոսարքային տարել 2-րդ քաղհանը և վերջնական նոսարքային տարել 3-ին քաղհանից 15—20 որ հետո, վերջնական նոսարքային հետո, բույսերը ակոսի յերկարությամբ թողնել իրարից 15—20 սմ. հեռավորության վրա:

Գ. ՍԻԼՈՍԻ ԲԵՐՔԱԿԱՎԱՔԸ

59. Սիլոսի համար արեածաղկը պետք է հնձել ծաղկեան շրջանում:

Դ. ԿԵՐԻ ՃԱԿՆԻԵԴԻ

Ա. ՄՇԱԿՈՒՐ-ՅՈՒՆ

60. Կ. Ճակնդեղի համար հատկացված հողամասի վարը կատարել աշնանից 20—22 սմ. իսկ առանց փոցինելու թողնել միջներ դարձուն: Գարնանը դաշտ դուրս դարու պես, կատարել կրկնավագ 10—12 սմ. իսկ առա խաչաղիք ձևով փոցինել յերկու անգամ:

61. Ցանքը կատարել հացահատիկների ցանքսին զուգընթաց: Արեածացույի նորման, կոնդիցիոն վիաճակում մեկ հեկտարին ցանել 16 կիլոգրամ:

62. Ծանր կավային հողերում ծիլերը յերեվալուն պես, կատարել միջամատը պահպան տարածությունների փխրացում և կատարել չափերի համատարած քաղհան, իսկական տերեվների 1-ին զույգը նկատվելու դեպքում, կատարել բույսերի նոսարքում, թողնելով մեկական բույս, 18—20 սմ. հեռավորության վրա: Նոսարքումից հետո կատարել ստուգում և «պաշինկա»: Բաց տարածությունները ցանել թրջված սերմերով: 2-րդ զույգի տերեվները միջներ վալուն պես կատարել 2-րդ փիլեցումը և մոլախոսերի քաղհան: Ճակնդեղի մշակման բոլոր աշխատանքները շարունակել այնքան անգամ, մինչև շարքերում յեղած բույսերի տերեվները հրաբ միանան:

63. Կ. Ճակնդեղի բերքահավաքը պետք է սկսել, յերբ տերեւն սկսում են չորսամատ և շաբթերը բացվել, ճակնդեղի բերքը պետք է կատարել չոր լեզանակներին, մինչև ցըսերի ընկելը:

12. ԲՆԱԿԱՆ ԽՈՏՀԱՐՔԻՆԵՐ

64. Վազ գարնանը կատարել քարերի համար, վերացնել կոշերը և թունագոր խոտերը, այն հաշվով, վորպեսզի խոտհարքերի ամբողջ տարածությունները հնարամուր լինի մաքուր հնձել: Կատարել հանդամիջյան, գյուղամիջյան ճանապարհների և կառուրների վերանորոգում կորուսաների դեմ պայքարելու նպատակով:

65. Կատեզորիկ կերպավ արգելել խոտհարքներում անառանձների արածացնելը մինչև խոտհունձը, վորը խիստ կերպով իջեցնում է խոտհարքի բերքատվությունը յեկ խոտի վորակը:

66. Խոտհունձը կատարել այն ժամանակ, յերբ բույսի մեջ ամենամեծ բանականթյամբ ոննապանյութեր են կոտտակված, վորը բնորոշում է խոտի կերպային բարձր արժեքը: Խոտհունձը ժամանակին չկատարելու գեպքում խոտարույսերը կոշտանում, փայտանում և իջեցնում են խոտի կերպային արժեքը:

67. Խոտի չորացումը կազմակերպել այնպես, վորպեսզի խոաւ հիմնային չորացած լինի, խոնավությունը հասցնել 16 տոկոսի:

68. Կորուսաներից խուսափելու համար խոտը քիչ չըջել, վորպեսզի (ամենասննդաբար ժամանակը) նուրբ տերեկնանը և ծաղկելու ըջարդին, չժափեն. խոտհունձին զուգընթաց պետք է կազմակերպել փոխադրումը և գիգելը:

69. Դեղ զնել լավ չորացած խոտը, զեղել հարթ և չոր տեղում: Հրդեններից խուսափելու համար պետք է զեղերը մեկը մյուսից 100—150 մետր հեռավորության վրա զնել և չուրջը առվակներ փորել ու մոռը ջուր ունենալ:

70. Պայքար կազմակերպել թունագոր բույսերի և մոլախոտերի վոչնչացման համար, համարքել և այրել այն:

13. ԱՐՈՏՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

71. Աբուներում անասունների արածացնելը սկսել ձյան հալվելուց և հողը չորանալուց հետո, հակառակ դեպքում կառաջանա կոշտեր:

72. Կիբառել արաների հերթականությամբ ողտագործելու ձեփերը: Քարի հավաքն սկսել արոտ գուրու գալու սկզբից մինչեւ ուշ աշնանը (յերբ տնաենությունն ունենում է ավելորդ բանվորա կան ուժ):

73. Ճահճային մոլախոտերի դեմ պայքարի ճահճեները չուրացնելու միջոցով, իսկ ճահճացած մեծ տարածությունները չորացնելու գրեթեաժի միջոցով:

74. Արգելել արտաներն ու խոտհարքները վարել, այդ պործում հանցավորներին կանչել զատական պատասխանավություն:

75. Աբուների թույնագոր խոտերը հավաքել և այրել:

Սույն ազգուկանոնների հոկուությունը զնել հողամայնի:

Մ8Կ-ի ազբուկերսոնալի և գյուղական խորհուրդների վրա:

Սյս ազբուկանոնները տարածվում են ինչպես ամբողջ կոլունակությունների, նույնական և մենատնտեսների և հիմնարկային շանքսերի վրա:


ԳԵՐԱԳՈՒՅՑՆ ԽՈՌՃՐԴԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ԿԻՑ ՂՈՒԿԱՍՅԱՆԻ ԿԱԶՄԿՈՄԻՑԵՅԻ ՆԱԽԱԳԱՀ:


Պ. ՅԵՍԱՅԱՆ

ՔՈՐՏՈՒԴԱՐ

Մ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Անինականի տեղաբանի տպարան: պատ. № 1247 տիր. 150 սրբան:





-20



513

10/16/1939

25-20

11

28397